ՀԱՅՏԱՐԱՐՈՒԹՅՈՒՆ

Հայտարարվում է մրցույթ՝ ՀՀ Վայոց ձոր մարզի <<Սալլիի հիմնական դպրոց >> ՊՈԱԿ-ի մաթեմատիկա (23 դասաժամ), ֆիզիկա (4 դասաժամ), ինֆորմատիկա (3 դասաժամ) առարկաների ուսուցչի թափուր տեղերի համար:

Մրցույթն անցկացվում է երկու փուլով՝ թեստավորման և հարցազրույցի: Թեստավորման փուլն անցկացվում է՝ ըստ ՀՀ ԿԳՍՄ նախարարության մշակած հարցաշարի: Հարցազրույցի փուլի հարցաշարը կազմում է հաստատությունը և յուրաքանչյուր մասնակցի հետ հարցազրույցը անցկացվում է առանձին:

Մրցույթին մասնակցելու համար պետք է ներկայացնել՝

- Դիմում / Ձև 1/ , մեկ լուսանկար 3 x 4 չափի,
- Բարձրագույն կրթությունը հաստատող փաստաթուղթ / դիպլոմ /
- Անձ հաստատող փաստաթուղթ,
- << Հանրակրթության մասին>> ՀՀ օրենքի 26- րդ հոդվածի 1- ին մասին համապատասխան աշխատանքային ստաժի վերաբերյալ տեղեկանք աշխատավայրից և աշխատանքային գրքույկի պատճենը / առկայության դեպքում/;
- Ինքնակենսագրություն /Ձև 5 /,
- Այլ պետությունների քաղաքացիները՝ ՀՀ- ում աշխատելու իրավունքը հավաստող փաստաթուղթ,
- ՀՀ արական սեռի քաղաքացիները ՝ նաև զինվորական գրքույկ:
- Հրապարակված հոդվածների ցանկ կամ գիտական կոչումը հավաստող փաստաթղթեր / առկայության դեպքում:
- Որակավորման տարակարգ ունենալու դեպքում՝ հավաստող փաստաթուղթ:

Տնօրենի կողմից նշանակված պատասխանատու անձը փաստաթղթերի բնօրինակները համեմատում է պատճենների հետ և բնօրինակները վերադարձնում: Եթե ներկայացված փաստաթղթերի ցանկն ամբողջական չէ կամ առկա են թերություններ, մասնակիցը կարող է մինչև փաստաթղթերի ընդունման ժամկետի ավարտը վերացնել և համալրել դրանք:

Փաստաթղթերը ընդունվում է նոյեմբերի 24 - ը ներառյալ, ամեն օր՝ ժամը 10: 00 -ից 15: 00-ն, բացի շաբաթ, կիրակի և այլ ոչ աշխատանքային օրերից:

Մրցույթը տեղի կունենա նոյեմբերի 29-ին, ժամը՝ 14: 00- ին Վայոց ձորի մարզի Սալլիի հիմնական դպրոցում :Հասցեն՝ Վայոց ձորի մարզ գ. Սալլի 2 փ. ,շենք 3:

Տեղեկությունների համար զանգահարել՝ +37493 49-36-26 հեռախոսահամարով: